ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ԱՑ-ԷՍ-2018/129

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.09.2018թ. թիվ 01.1/26-3/16404-18 գրությամբ «Մասիս» ԱԿ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 05.09.2018թ. թիվ 18/475-18 գրության հիման վրա, 11.09.2018թ. «Մասիս» ԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը 05.09.2018թ. թիվ 18/475-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը ՀՀ Գեղարքունիքի մարզի Կալավան գյուղական համանքում գիտական և արկածային զբոսաշրջության կենտրոնի շինության կառուցման աշխատանքների նպատակով 17.07.2018թ. հայտարարել է ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի արդյունքում հաղթող է ճանաչվել «Մասիս» ԱԿ-ն: Վերջինիս հետ 09.08.2018թ., սահմանված կարգով, կնքվել է կապալային աշխատանքների գնման պայմանագիր: Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Կապալառու կազմկարպությունը իրականացնելով որոշակի ծավալով աշխատանքներ դիմել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին՝ հրաժարվելով գնման պայմանագրով ստանձնած հետագա պարտավորությունների իրականացումից:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչներ Արթուր Էլոյանը և Արմինե Նամալյանը:

3. «Մասիս» ԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 11.09.2018թ. գրությամբ դիմել է «Մասիս» ԱԿ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.09.2018թ. թիվ 01.1/26-3/16404-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել

Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Մասիս» ԱԿ-ի տնօրեն Վանուշ Ալոյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/129 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 11.09.2018թ. թիվ 01.1/26-3/16404-18 գրությունը, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի 05.09.2018թ. թիվ 18/475-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի և «Մասիս» ԱԿ-ի միջև 09.08.2018թ. կնքված N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 ծածկագրով գնման պայմանագիրը, Պատվիրատուի կողմից 04.09.2018թ. «Մասիս» ԱԿ-ին ուղղված թիվ 18/473-18 գրությունը, «Մասիս» ԱԿ-ի կողմից 04.09.2018թ. «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին ուղղված գրությունը.

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի և «Մասիս» ԱԿ-ի միջև 09.08.2018թ. կնքվել է N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Կառույցների կառուցման աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:
- 1.2 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և

կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

- 1.3 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է մինչև 25.10.2018թ.:
- 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառած վնասները, եթե.

- ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

- բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

- 8.1 կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
- 8.9 կետի համաձայն՝ Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Մասիս» ԱԿ-ն 04.09.2018թ. գրությամբ դիմել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Մասիս» ԱԿ-ն ի վիճակի չէ կատարել 09.08.2018թ. N ՓՄՁ-ՁԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 ծածկագրով կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունները և 03.09.2018թ. հրաժարվում է նշված պայմանագրով նախատեսված պարտավերությունների հետագա կատարումից:»:

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը 04.09.2018թ. թիվ 18/473-18 գրությամբ «Մասիս» ԱԿ-ին հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 04.09.2018թ. գրության, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի և «Մասիս» ԱԿ-ի միջև 09.08.2018թ. կնքված N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 պետական գնման պայմանագրի կատարումից հրաժարվելու վերաբերյալ դիմումի, տեղեկացնում ենք, որ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը Ձեր կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով միակողմանի լուծում է վերոհիշյալ պայմանագիրը:

Հայտնում ենք, որ Ձեր կոոպերատիվի նկատմամբ կիրառվելու են նշված պայմանագրով նախատեսված պատասխանատվության համապատասխան միջոցները:»:

Միաժամանակ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 05.09.2018թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կիսատ թողնելը պայմանավորված է եղել նրանով, որ վերջինս կարծելով թե նախահաշվային գինը (47.529.150) ներառում է ԱԱՀ-ի գումարը, գնային առաջարկ է ներկայացրել՝ 34.740.000 ՀՀ դրամ գումարի չափով, իսկ պայմանագիրը կնքելուց հետո միայն պարզել է, որ կնքված պայմանագրի գինը՝ 28.950.000 ՀՀ դրամը գումարը չի ներառում ԱԱՀ-ի գումարը, այդ իսկ պատճառով Ընկերությունը ստիպված է եղել դադարեցնել նախատեսված աշխատանքների իրականացումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից

հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի և «Մասիս» ԱԿ-ի միջև 09.08.2018թ. կնքված N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 պայմանագրի N 2 Հավելվածով նախատեսված աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկի համաձայն՝ վերջնաժամկետ է սահմանվել՝ 25.10.2018թ.:

- «Մասիս» ԱԿ-ն 03.09.2018թ. գրությամբ հրաժարվել է N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 պայմանագրով նախատեսված պարտավերությունների հետագա կատարումից:

- «Մասիս» ԱԿ-ն պատշաճ ծանուցվել է 04.09.2018թ. կնքված N ՎՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/9 ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, ինչպես նաև պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը 05.09.2018թ. հրապարակվել է www.procurement.am կայքում:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Մասիս» ԱԿ-ն, Պայմանագրով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետներում չկատարելովելով՝ խախտել է 09.08.2018թ. կնքված N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 գնման պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունն, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Մասիս» ԱԿ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.09.2018թ. թիվ 01.1/26-3/16404-18 գրությամբ «Մասիս» ԱԿ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Մասիս» ԱԿ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ